

ՎԱՐԴԱՆԱՆՅ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՌԹԻԻ

ԽՈՐՀՐԴԱՄՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. Հայաստանի նախապատերազմեան զինակը. - Բ. Սասանեաններու կրօնական ըմբռնումը վարչութեան մէջ. - Գ. Յագեկերտ Բ.ի փորձը. - Դ. Կոուին կրօնական և քաղաքական բնոյթը. - Ե. Հայ նախարարները Յագեկերտի քաղաքականութեան առջեւ և վասակի դերը. - Զ. Սուր քո և... սուր մեր:

U.

« Ի նախարարսն հայոց անկանէր թա-
գաւորութիւնն » :

Այս խօսքերով կու տայ Եղիշէ Հայաստանի քաղաքական կացութիւնը, մինչ կը ձեռնարկէ Վարդանանց պատերազմի պատմութեան :

Արչակունի Թագաւորներու անկումէն
յետոյ (428) մեր աշխարհին յերկն հրա-
մանատարու թիւնն ունէր Մարզպան մը՝
իրը ներկայացուցիչ Արքայից արքային .
Հաղարապետ մը եւ Սպարապետ մը իր օգ-
նականներն էին : Բնականաբար Մարզպա-
նը էջր Թագաւոր մը, այլ հեռուէն հակող
մը, առանց կարենալ միջամտելու նախա-
րարներու ներքին վարչութեան :

Այս դրուժինը շատ դիւր կու գար մեր ազատասէր նախարարներուն, որոնք հը պատակութեան եւ որոշ չափով մը նաեւ համար տալու պարտք ունէին ընդ ժամանակահատիկ թագաւորի մը :

Նախարարներու ազատատենչ այդ հա-
կումը միւս կողմէն շատ ձեռնտու եղաւ
Սասանեան ինքնակալներու ծրագիրնե-
րուն: 384-է մասնաւանդ 428-է վերջ ար-
դէն Հայաստան բոլորովին յանձնուած էր
պարսիկ պետութեան¹, բայց դեռ կը պա-
հէր նախկինէն վարչաձեւ մը. «Հայրենի

¹ Յոյները ոչ միայն ձեռնթափ եղած էին Հայաստանէն, այլ Ատտիլայի պահանջները թոյլ չէին տար իրենց՝ նոյնիսկ մտածելու արեւելքի մասին:

սաղատուութիւն» մը: Տուրքերը վը վճարուէին արքունի դանձին. պատերազմի ժամանակ փոխանակ իրենց բնիկ թաղաւորներուն՝ կ'երթային կռուիլ Իրանի վեհապետներու բանակներուն մէջ, արեւելեան կամ հիւսիսային հեռաւոր բարբարոսներու դէմ. բայց իւրաքանչիւր նախարարինքը կը պահէր իր դունդին հրամանատարութիւնը: Հայ դունդը կը կռուէր իր ամբողջական կազմով, առանց պարսիկ սպաներու միջամտութեան, Արքայից արքային վերին հրամանատարութեան տակ: Թէպէտ հպատակ՝ Հայաստան մարդ մը չէր, այլ կը պահէր դեռ իր ինքնուրոյն պետութեան մը հանդամանքը: Արքայից արքաներու հետապնդած քաղաքականութիւնը եղաւ՝ քաղաքականապէս ենթարկելէ յետոյ իւրացնել այդ հսկայ եւ հարուստ աշխարհը. խնամութեան և բարեկամութեան կապերով միացնել զանոնք իսկնց հետ:

Այս մասին հայերը իրենց կողմէն չէին տուած դանդաւոր առիթ մը: Սակայն կա՞ր ազդակ մը որ այդ կասկածելի եւ չիւրացուած աշխարհը ոչ միայն դեռ հեռու կը բռնէր պարսկական ճուղումէն, այլ մահաւանդ կը մօտեցնէր զանոնք նախանձորի հզօր պետութեան մը. այդ ազդակն է՛ր կրօնքը:

P.

Ոմանց կեղծ թուեցաւ Վարդանանց պատերազմին մէջ կրօնական ազդեակը. թեւեւ որովհետեւ անոնք ուղած չեն նկատի

առնել էր օրի ղերը Սասան կայսրութեան
մէջ :

Քէջ:
Սասանեան հարստութիւնը իր հաստատութեան առաջին օրերէն ստեղծեց երկու ուժեղ դրութիւն . կեդրոնական վարչական կազմ մը , եւ պետական դէն : Իրենց քակաղ մը , եւ պետական կենդանացնել զաբական նպատակը եղաւ կենդանացնել Պարս Ա . ի կայսրութիւնը , եւ այդ կայսրութեան տալ , իրը ներքին միութեան կապ՝ Կրօնքը :

Հրա-

կապ՝ կրօնքը :
Արտաշիր Ա. արդէն հաւաքելով Ձրա-
դաշտի օրէնքները, կազմել տուեր էր կրօն-
քի դիրքը : Ձրադաշտական կղերը անտե-
ղիտակի դարձաւ . սակայն այդ անտեղի-
տակիութիւնը աւելի քաղաքական տեսա-
կէտով էր . Ձրադաշտութիւնը քաղաքական
կրօնք մը չէր, եւ իր պետերը ոչեւորուած
չէին մարդկութեան հոգեկան զիլու-
թեամբ, բայց կայսրութեան սահմաններէն
ներս կ'ուղէր ինքնիշխան տիրել :

Ծանօթ է որ Արքայից արքան իրօք ա-
օրէնքով բռնատիրական գրութեամբ կը
վարէր կայսրութիւնը, սակայն քիչ չեն այն-
վեհապետները որ վերջացուցեր են զահա-
ղըրկութեամբ կամ մահով: Այն զօրութիւ-
նը որ երբեմն կ'արձանանար Արքայից ար-
քաներուն դէմ ալ՝ էր կրօնքը:

«Լաւաղոյն վեհապետը, ըստ Հիւր-
տական օրինադրելին, այս աշխարհիս վրայ
նա է որ հաւատք կ'ընծայէ վարդապետնե-
րուն այս աշխարհիս լաւաղոյն կրօնքին,
որ կը պարունակէ Որմիշդի իմաստութիւ-
նը: Գէշ թաղաւոր մը կը էքուի աստուա-
ծային մեծ վայելչութենէն, եւ պէտք չէ
իշխէ իր չար կամքին կամ անկարողու-
թեան յայտնի բլլալէ յետոյ: Թաղաւոր մը
թեան յայտնի բլլալէ հասած չարիք մը,
որ չի կրնար դարձանել կռուին իրեն դէմ»:
Հարկ է որ ուրիշներ կռուին իրեն գէշ
չարիքէն, որ ուրիշներ անկարողութիւնը

Այդ թագաւորի մը մօտիկ չէր
անով ալ յայտնի կ'ըլլար որ մօտիկ չէր
ընէր մօտակաթի խորհուրդներուն եւ ուղ-
ղութիւններուն: Թագաւորը փոփոխելու
կարողութիւնը արդէն հզօր գէնը մըն էր

մողպետին ձեռքին մէջ՝ մողպետին կ'իյ-
նար, ինչպէս մեր մէջ Բաղրատունիներու,
Թաղը դնել նորընտիր Թաղաւորի գլխուն:
Մողպերը ոչ միայն իրր կրօնականներ, ալ
նաեւ իրր դատաւորներ՝ գործօն դեր մը
ունէին կայսրութեան պահպանումին մէջ:
ունէին կայսրութեան պահպանումին մէջ:

Պարսիկները իրենց կայսրութեան մաս-
մաններուն մէջ ընդհանրապէս թոյլատու
էին օտար կրօնքներու, երբ անոնք քաղա-
քական ոյժ մը չէին ներկայացներ, այս-
պէս մանիքեցիներուն (անոնց պարտութե-
նէն վերջ), այսպէս հրեաներուն: Սակայն
նոյնը չէր քրիստոնեաներու համար, որոնք
կրնային քաղաքական ոյժ մը ներկայացը-
նել, մասնաւանդ երբ օտար կրօնակից պե-
տութիւն մը կրնար կոնսակ կանգնիլ անոնց:
Օտար կրօնքի մը հետեւորդները կը հա-
մարուէին անլստահելի հպատակներ. վըս-
տահելի հպատակ մը պէտք էր դաւանիլ
գրադաշտական նոյն կրօնքը²:

Եթէ այդպէս էր իրենց բնիկ սահմանա-
բուն մէջ զտնուող քրիստոնեաներուն հան-
դէպ, խնդիրը բոլորովին սուր հանդա-
մանք մը կը ստանար կաղմակերպուած աշ-
խարհի մը նկատմամբ, որպիսին էր Հա-
յաստան:

9.

Յաջողքեր էին զբաղեւ Հայաստանը, մա-
նաւանդ թէ ցմիշտ ենթարկել, մարդպա-
նութեան վերածելով թաղաւորութիւնը.
սակայն դեռ կը մնար իւրացնելու հարցը:
Պարսիկները մարդպանութիւնը չէին պար-
տադրած, այլ շնորհքեր էին զայն հայ նա-
խարարներու խնդրանքին. ուստի դեռ նա-
խարարութիւնը կը ներկայանար իբր իր
աշխարհին պատասխանատու մարմինը:
Յազկերտ Բ. չէր ուզեր բնդունիլ իրերու
ճակատը. Ժամանակը եկած կը համա-
այլ վիճակը. Ժամանակը եկած կը համա-
բէր որ Հայաստան նկատուի այլեւս ո'չ

² L'Iran sous les Sassanides, par Arthur Christensen. Chp. III, Paris, 1936.

միանգամայն տեղեակ պահելով արքունիքը չարժուամի մանրամասնություններուն: Յաջորդ բոլոր դէպքերուն մէջ նախ ծածուկ՝ յետոյ բացայայտ, ա՛յո կ'ըլլայ Վասակի քաղաքականութիւնը: Հայոց թէ պարսից առջեւ Վարդանը ներկայացնել իբր ապրտամբութեան պատասխանատուն: Թողութիւն պիտի տրուի, կը քարոզէ ամէնուն, «միայն թէ ի բաց դառնայք ի խրատուէ եւ ի բանից Վարդանայ եւ մի կորնչիք ընդ դմա»⁷: Եթէ չարունակէ Վարդան, նա պիտի ըլլայ միայն պատասխանատուն հայոց ու պարսից առջեւ: Եթէ երբեք ետ կենայ՝ հպատակի, այդ եղած կ'ըլլայ միայն Վասակի խորհուրդով:

Ոմանք անարդար ու չափազանցուած կը դտնեն Վասակի դէմ մեր պատմիչներու եւ


⁷ Ղազար Փարպ. էջ Բ. ԼԳ. 211. - Պատմութեան հեղինակը որ եր երկը գրած է դէպքէն տարիներ յետոյ «ուխտս սուտս եւ վկայութիւնս ընդունայնըս», կ'ըսէ այդ հրովարտակին համար:

Ժողովուրդին զգացած դայրոյթը: Սակայն մտածել որ առանց այդ մարդու մեքենայութիւններուն, միացած ու կուռ ազգային կամքի մը առջեւ կրնար շատ դիւրաւ տեղիք տալ Յաղկերտի նման Արքայից արքայ մը, որ ծանօթ է իր շատ դիւրապիտիւս բնաւորութեամբ...:

Աղբի մը տուած դատաւճիռը դժուար է թէ առաջ եկած ըլլայ մի միայն Եղիշէի մը դիւրազգած ոգիէն:

Յայտնի է Յունիս 2-ի ճակատամարտին եւլը: Յաղթուիլ, ըսել է՝ հպատակիլ: Յաղկերտ չզղաց այդ զոհունակութիւնը: Յաջորդող տարիներուն պղտոր վիճակին մէջ թէպէտ հեռացուած են Ուխտապահները եւ անոնց ընտանիքները, սակայն ակնածելի են եւ աւարկայ նախանձի, միւնչեւ որ Վահան Մամիկոնեան դէպքերէն օգտուելով կը յաջողի պարսից արքունիքին յարգել տալ իր եւ հօրեղբոր պայմանները:

Հ. Յ. Զ.



Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԸ

ՄԻՆՉԻՆՈՒ Աւարայրի պանծալի Հերոսամարտին 1500 ամեակը առարկայ կ'ըլլայ ամբողջ Հայ Սփիւռքի համագլխին ու խանդավառ ցոյցերուն, միւս գոյին ու խանդավառ ցոյցերուն, միւս կողմէ սակայն աւելի շեշտուած կը զգանք այսօր մեր սրտերու զգացումներուն առջեւ խոշոր պարագիծի մը:

Ստուգիւմ որքան մեծ պիտի ըլլար այսօր բոլոր հայորդիներու ցնծութիւնը՝ եթէ բախտն ունենայինք միանգամայն բոլոր ունեւէրի եւ Հայրենիքի ճշմարիտ ունեւէր Կրօնքի եւ Հայրենիքի գէթ սիրովը անմահացած 1036 վկաներէն գէթ մէկուն նշխարին շուրջ: Ինչպիսի պերճ թափօրներով պիտի ուզէինք զաւառէ զաւառ, բազմաբէ բազմաբ շրջանցնել այդ սուրբ դիւցազնը, իբր միակ ներկայացուցիչը դիւցազնը, իբր միակ ներկայացուցիչը Նահատակներուն: Առանց ցիչը սուրբ Նահատակներուն, ամէն խտրութեան՝ ազգային ամէն կեղծոյն, ամէն անհատ երկրպագ յարգանքով պիտի հետեւէր անոր, ինչպէս ամէն բրիտանիայ տեւէր անոր, ինչպէս ամէն ինչ մէկ յաերկրներ կը կատարուին: Ո՛չ մէկ յա

բանուանութիւն, ոչ մէկ հայ կուսակցութիւն պիտի չուզէր թերանալ իր ջերմ արտայայտութեան սրտազին բաժինը բերելու սոյն դիւցազնացած Նահատակին, թէ ըլլար ան նոյնիսկ ամէնէն անուս ու թէ ըլլար զինուորը: Անոր մէջ պիտի պարզուէր զինուորը: Ինք Կարմիրն Վարդան, խորհրդանշուէր ինք Կարմիրն Վարդան, մէջ պիտի տեսնէինք Քաջն Վարդանի բոլոր զօրավարներն ու զօրականները:

Անծանօթ չեն մեզի Հայ իրականութեան մէջ դարերու տուած բերքը... Եւ թեան մէջ դարերու տուած բերքը... Եւ թեան մէջ դարերու տուած բերքը... Եւ թեան մէջ դարերու տուած բերքը...

Այդ տեսակէտէն, ինչ որ ծանօթ է ինծի, յատկապէս շահագրգռուած են հետեւալ երկու ազգային բերթոյնները:

Առաջինն է Հ. Աւիշան, որ իր քաղցր քնարի թելերով հետեւալ հարցը կու տայ.

Եւ դուք կարմիր Վարդանայ վարդանման դուք ընկերք Որ յԱրտագու գաշտերէն մինչ ի Համէն էք քրնքր Արդեօք ձեր սուրբ արեան գին՝ աշխարհիդ բախտն յիշելով Շարժէք դեռ զքաջ բազկներ հոգիներուդ կըրակով:

Ու չի տարակուսիր յատուկ հանգստաբաններ ունենալուն երբ կ'ըսէ.

Ով Հայրապետք սուրբ փառք աշխարհիդ Որ նընջեցիք ի մատրանց ներքեւ:

Երկրորդն է Գամառ Քաթիպա, որ Վարդանի կողմէ իր քաջերուն ուղղուած քաջաւերանքին մէջ կ'ենթադրէ ազգային զգացումով մը նոյն նախատեսութիւնը.

Ձեր անկման տեղը կրօնասէր մարդիկ կը դարձնեն անշուշտ աղօթոյ տեղիք, Ձեր մարմինն ամեն մի Հայի համար կը դառնան մատուց սրբոց փերկարար:

Բայց Հ. Աւիշան, որուն ուշադրութեան չի վրիպիր Հայրենիքի ոչ մէկ անկուն, ոչ մէկ յիշատակ, մղուած բարեկրին, ոչ մէկ յիշատակ, մղուած բարեկրին, ոչ մէկ յիշատակ, մղուած բարեկրին...

(1) Նուագը, Հար. Գ. տպ. 1926. Լուսնկայն Գերեզմանաց Հայոց, էջ 304.
(2) Անդ, էջ 306.
(3) Բանաստեղծութիւնք. Մոսկուա, 1864. Քաջ Վարդան Մամիկոնեանի մահը, էջ 109: